Այնուհետև Հայոց Հայրապետը Իր օրհնությունն է տալիս խորհրդակցության մասնակիցներին և, հաջողություն մաղթելով, մեկնում նիստից:

Տասը րոպե ընդմիջումից հետո գումարվում է խորհրդակցության Ա նիստը, ուր և ընտրվում է խորհրդակցության դիվան: Երկու ատենապետներ են ընտրվում՝ տ. Սիոն և տ. Տաթև սրբազանները, երկու ատենադպիրներ՝ Վարդգես Տեր-Կարապետյանը և Արթուն Հատիտյանը:

Ա նիստի ատենապետությունը վարում է տ. Սիոն արքեպիսկոպոսը: Որոշվում և հաստատվում է խորհրդակցության հետևյալ օրակարգը.

ա) Կենտրոնական, համազգային մի մարմնի կազմությունն հարց.

բ) Հանգանակության ընդհանուր կազմակերպում:

Ժողովականները համաձայնվում են կենտրոնական մարմնին համազգային բնույթ տալու ձևերի մասին՝ նոր անունների հավելումով:

Ժողովականները համաձայնվում են նաև թեմերից ներս հանգանակության գործը կազմակերպել թեմական առաջնորդների նախագահությամբ և հանգանակիչ հանձնախմբերի միջոցով, Բեյրութի կենտրոնական մարմնի օրինակով:

Նոյեմբերի 10-ին, ուրբաթ օրը, Վեհարանում գումարվում է խորհրդակցության Բ նիստը՝ ատենապետությամբ տ. Տաթև եպիսկոպոսի:

Հատենի ժողովի կատարվում է Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի ինը կետերից բաղկացած առաջադրանքները՝ հեշտացնելու համար խորհրդակցության աշխատանքները:

Ժողովականները իրենց շնորհակալությունն ու երախտագիտությունն են արձանագրում Հայոց Հայրապետի ճիշտ և օգտակար առաջադրանքների համար, ծանոթանում դրանց բովանդակությանը: Տեղի են ունենում մտքերի և կարծիքների լայն փոխանակություն, և որոշվում է հաջորդ նիստում, հիմք ունենալով Վեհափառ Հայրապետի առաջադրանքները, պատրաստել հրապարակվելիք համատեղ մի հաղորդագրություն:

Նոյեմբերի 11-ին, շաբաթ օրը, Վեհարանում գումարվում են խորհրդակցության Գ և Դ նիստերը, ուր եղբայրական սիրո մթնոլորտում Մայր Աթոռի ներկայացուցիչները և Մեծի Տանն Կիլիկիո պատգամավորները ընդունում են միաձայն հետևյալ համատեղ հաղորդագրությունը.

ՀԱՄԱՏԵՂ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի հրավերով նոյեմբեր 8-ին, չորեքշաբթի օրը, երեկոյան, Մայր Աթոռ ժամանեց Անթիլիասեն Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի պատվիրակությունը՝ խորհրդակցելու և միատեղ ծրագիր մշակելու համար Լիբանանի հայ համայնքներու աղետյալներու օգնության գործը համահայկական տարողությամբ կազմակերպելու առաջադրանքով:

Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի պատվիրակության կազմի մեջ էին.

1. Գերաշնորհ տ. Տաթև եպս. Սարգիսյանը, Անթիլիասի դպրեվանքի տեսուչ.
2. Մեթր Խաչիկ Պապիկյանը, պետական երեսփոխան, Կաթողիկոսության Ազգային ընդհանուր ժողովի և լիբանանահայոց թեմի Գավառական ժողովի ատենապետ.
3. Տիար Վարդգես Տեր-Կարապետյանը, Ազգային կեդրոնական վարչության ատենապետ;

Նոյեմբեր 9—11 օրերուն սուրբ Էջմիածնի Վեհարանի ընդունելության դահլիճին մեջ տեղի ունեցան նախատեսված խորհրդակցությունները Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի վերոհիշյալ պատվիրակության անդամներու և Մայր Աթոռի ներկայացուցիչներու միջև:

Մայր Աթոռի ներկայացուցիչներն էին՝

1. Գերաշնորհ տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը, ատենապետ Գերագույն հոգևոր խորհուրդի.
2. Գերաշնորհ տ. Կոմիտաս արքեպիսկոպոս Տեր-Ստեփանյանը, առաջնորդական փոխանորդ Արարատյան թեմի և անդամ Գերագույն հոգևոր խորհուրդի.
3. Տիար Հովհաննես Թոփուզյանը, անդամ Գերագույն հոգևոր խորհուրդի.
4. Տիար Արթուն Հատիտյանը, խմբագիր «Էջմիածին» ամսագրի:

Նոյեմբեր 9—11 օրերու խորհրդակցություններեն հետո, եղբայրական սիրո մթնոլորտի մեջ, երկու պատվիրակությունները միաձայնությամբ որոշեցին հրապարակել ի գիտություն հայ ժողովուրդի համատեղ հետևյալ հաղորդագրությունը:

ա. Ողջունել Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության նախաձեռնությամբ Պեյրութի մեջ հոկտեմբեր 27-ին կազմված **Լիբանանի Վերականգնումի կեդրոնական մարմինը,** ընդ նախագահությամբ Տ. Տ. Խորեն Ա կաթողիկոսի և Տ. Տ. Գարեգին Բ աթոռակից կաթողիկոսի և փոխնախագահությամբ հայ կաթողիկե պատրիարք տ. Հմայակ Կետիկյանի և հայ ավետարանական համայնքի վերապատվելի Հ. Սաղրյանի:

բ. Ողջունել Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի պատրաստակամությունը՝ ստանձնելու լիբանանահայ աղետյալներուն ի նպաստ կատարվելիք համազգային հանգանակության հովանավորությունը:

գ. Մայր Աթոռը և Մեծի Տանն Կիլիկիո Աթոռը հանգանակության գործը կկազմակերպեն յուրաքանչյուրը իր թեմերուն մեջ, թեմական-եկեղեցական մարմիններու միջոցավ, տվյալ թեմերու մեջ կազմելով հանգանակիչ հատուկ մարմին, թեմական առաջնորդի նախագահությամբ և գործոն մասնակցությամբ բոլոր հայ կրոնական հարանվանություններու, ազգային կազմակերպություններու և բարեսիրական, մշակութային կարևոր միություններու ներկայացուցիչներուն:

դ. Հրավիրել Հ. Բ. Ը. Միության Կեդրոնական վարչությունը, իր ներկայացուցիչը ունենալու **Լիբանանի Վերականգնումի կեդրոնական մարմնեն** ներս:

ե. Օգնության աշխատանքին տալու համար համազգային տարողություն, խնդրել Մայր Աթոռի և Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի Գահակալներե, նշանակել մեծանուն բարերարներե և ազգային անձնավորություններե բաղկացած պատվո ցանկ մը, օժանդակելու համար լիբանանահայ աղետյալներուն ի նպաստ կատարվելիք հանգանակության:

Լիբանանի Վերականգնումի կեդրոնական մարմինը պարբերաբար տեղյակ պիտի պահե վերոհիշյալ անձնավորությունները իր գործունեության մասին, նկատի ունենալով անոնց օգտակար խորհուրդները:

զ. Հանգանակված գումարները կեդրոնացնել և տրամադրել Պեյրութի մեջ կազմված **Վերականգնումի կեդրոնական մարմնին,** որ իրավասու է այդ գումարները հատկացնելու Լիբանանի հայ աղետյալներու կենսական կա-

ոիքները հոգալու, եկեղեցական, մշակութային հաստատությունները վերաշինելու և տնտեսական կյանքը վերականգնելու գործին:

է. Ամենայն Հայոց Հայրապետը և Մեծի Տանն Կիլիկիո Հայրապետները տևապես պիտի հետևին հանգանակությանց, գումարներու կեդրոնացման և բաշխումի ընթացքին, իրենց օրհնությամբ և հորդորներով միշտ զորավիգ ու քաջալեր հանդիսանալով սույն գործի բարվոք կատարման:

ը. Ամենայն Հայոց Հայրապետը և Մեծի Տանն Կիլիկիո Հայրապետները մշտական հարաբերություն պիտի պահպանեն թղթակցությամբ կամ իրենց ներկայացուցիչներու փոխադարձ այցելություններով և, ի պահանջել հարկին, խորհրդակցաբար, համազգային նոր միջոցառումներու պիտի դիմեն ի խնդիր վերև նշված նպատակներու իրականացման:

թ. Մայր Աթոռ սուրբ Էջմիածինը, Մեծի Տանն Կիլիկիո Աթոռը, նվիրապետական մյուս Աթոռները և համայն Հայաստանյայց եկեղեցին և հավատացյալ ժողովուրդը, ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, անձանձրույթ պիտի աղոթեն ի խնդիր Աստուծո օրհնությամբ Լիբանանի մեջ խաղաղության հաստատման, քրիստոնյա ու մահմեդական բոլոր համայնքներու միջև եղբայրական համերաշխ գործակցության:

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ	ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ
ԱԹՈՌԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐ	ՍԻՈՆ ԱՐՔԵՊ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
ՏԱԹԵՎ ԵՊՍ. ՍԱՐԳԻՍՅԱՆ	ԿՈՄԻՏԱՍ ԱՐՔԵՊ. ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ
ՄԵԹՐ ԽԱՉԻԿ ՊԱՊԻԿՅԱՆ	ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՓՈՒԶՅԱՆ
ՎԱՐԴԳԵՍ ՏԵՐ-ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՏՅԱՆ

Սուրբ Էջմիածին,
11 նոյեմբեր 1978 թ.

Խորհրդակցությունն իր աշխատանքները ավարտում է ժամը 14.30-ին:

Խորհրդակցության երկու սրբազան ատենապետները, հանուն ժողովականների, հրավիրում են Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին օրհնության Իր խոսքը ասելու խորհրդակցության ավարտին՝ կատարված համերաշխ և օգտակար աշխատանքների համար:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԻՆ
(11 նոյեմբեր 1978 թ.)

Մենք գոհունակությամբ կողջունենք ձեր կատարած աշխատանքը: Կմաղթենք և կհավատանք, որ Աստուծո օգնությամբ և մեր եկեղեցվո բոլոր կեդրոններու և համայն մեր հավատացյալ ժողովուրդի գործակցությամբ, առավելագույն չափով հնարավոր կդառնա ամբողջ հայության օգնության ձեռքը երկարել Լիբանանի հայ աղետյալներուն, վնասված եկեղեցիներուն, դպրոցներուն և հաստատություններուն, որպեսզի մոտ ապագային աղետյալ այդ հայ համայնքը վերագտնե երբեմնի իր ամբողջականությունը, իր բոլոր եկեղեցական, կրթական և բարեսիրական և ազգային հաստատություններով և շարունակե իր գոյատևումը և առաքելությունը հոգևոր և կրթական ու մշակութային:

Այդ առաքելությունը մեզի համար շատ կարևոր է, որովհետև լիբա-

նանահայ համայնքը անբաժանելի և հարազատ մասն է Հայաստանեայց առաքելական եկեղեցիին ու ժողովուրդին:

Կմնա հիմա, որ գործի անցնինք, դուք և մենք, ամեն մեկս մեզի հատուկ եղանակներով և ճանապարհներով:

Մենք Մեր սեպուհ պարտքը պիտի նկատենք, իբրև առաջին ապաստվորը մեր եկեղեցվո, Մեր խոսքը հասցնելու արտասահմանի մեր բոլոր թեմերուն, որպեսզի շուտափույթ կերպով սկսի և ծավալի այս եղբայրական օգնության գործը: Եվ Մենք շատ գոհ ենք, որ տակավին նախքան ձեր այստեղ ժամանումը, թե՛ Ֆրանսայի և թե՛ Միացյալ Նահանգաց մեր թեմական առաջնորդները սկսած են գործի անցնիլ, Մեզի այդ մասին տեղյակ պահելով հեռախոսներով ու հեռագիրներով:

Հիմա այդ աշխատանքները պետք է շարունակվին ավելի կազմակերպվածությամբ, և ավելի համազգային տարողությամբ: Մենք ալ պիտի հետևինք անշուշտ, որպեսզի ամեն ինչ ընթանա նպատակալաց կերպով և առավելագույն արդյունավետությամբ:

Աստուծո ողորմությամբ թող Մեր բոլոր ակնկալությունները լիությամբ կենսագործվին և այս կերպով թող անգամ մը ևս ճշմարտվի մեր Մայր եկեղեցվո և ժողովուրդի իրական միասնությունը և համերաշխ գործակցությունը:

Ձեր ներկայությունը և այն սիրալիր մթնոլորտը, որ այս օրերուն ստեղծվեցավ այստեղ, Մեզի հիշեցուցին 1963-ի Երուսաղեմի ողջագուրումի պահերը:

Տա Աստված, որ մեր ապրած այս օրերը հանդիսանան ապագա նոր և իրական ողջագուրումի մը նախատոնական պահերը:

Կրկին անգամ Մեր ջերմ գնահատանքը ձեր բարեխիղճ աշխատանքին համար և բոլորիդ Տիրոջը օրհնությունը ս. Էջմիածնեն:

Հանուն Մեծի Տանն Կիլիկիո պատվիրակության, Նորին Սուրբ Օծության ուղղված շնորհակալության և երախտագիտության հետևյալ ջերմ խոսքն է ասում մեթր Խաչիկ Պապիկյանը.

ՄԵԹՐ ԽԱՉԻԿ ՊԱՊԻԿՅԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆ ԽՈՍՔԸ

Վեհափառ Տեր,

Թույլ տվեք մեր պատվիրակության անդամներու անունով և ի մասնավորի հանուն Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի զույգ Գահակալներուն, հայտնել մեր բոլորի խոր շնորհակալությունները նախ Ձերդ Վեհափառության հրավերին համար, ապա այն ներշնչումին համար, որ մեր աշխատանքներուն ընթացքին տվիք անձնապես:

Կուզեմ ընդգծել հոս այն հասկացողության ոգին, որ ցուցաբերեցին Ձերդ Վեհափառության կողմե նշանակված Մայր Աթոռի ներկայացուցիչները այս գործին նայելով իբրև իրենց գործը, հակառակ որ Լիբանանի հատուկ հարց էր, ըրին այդ բոլորը՝ հետևելով Ձերդ Վեհափառության ներշնչումին:

Իրոք Դուք եք, Վեհափառ Տեր, որ բնորոշեցիք հանձնախումբի աշխատանքներու ընդհանուր գիծերը և մեծապես սատարեցիք Ձեր հայրական հորդորներով անոր գործերու բարվոք ընթացման;

Գալով ապագայի աշխատանքին, արդեն իսկ այս ոգին տեսնելով, մենք պիտի վերադառնանք Լիբանան այն վստահությամբ, որ Լիբանանի աղետյալներու հարցը դարձած է իսկական համահայկական հարց:

Եվ ասիկա պիտի բացատրենք մեր ժողովուրդին ոչ միայն իբր զուտ հայկական հարց, այլ նաև իբր Լիբանանի անկախությունը և վերականգնումը հետաքրքրող կարևոր հարց:

Գիտենք մենք բոլորս Ձերդ Վեհափառության հեղինակությունը համայն հայության առողջ զավակներու սիրտերեն ներս, ատոր ալ երբ կըսեք, որ Ձեր պաշտոնական հանգամանքե զատ նաև անձնապես ալ որոշ դիմումներ պիտի կատարեք, մենք կհրճվինք և լրիվ վստահությունը կունենանք, որ այս գործը կրնա միայն ու միայն հաջողությամբ պսակվիլ:

Վստահ ենք, որ մեր Վեհափառ Հայրապետները, որ հԱնթիլիաս, իրենք ևս պիտի հրճվին և գոտեպնդված զգան իրենք զիրենք ապագա աշխատանքի մեջ, երբ մեր Լիբանան վերադարձին փոխանցենք իրենց այս մասնակցության ոգին, որ տիրեց մեր գործերու ընթացքին, այն նույն ոգին, որ ավելցնեմ խոնարհաբար, որ միշտ ու միշտ, Վեհափառ Տեր, հիացումով նկատած եմ Ձեր մեջ:

Դուք ուզեցիք ակնարկել ողջագուրումի օրերուն, որ մեր կյանքին մեջ ամենաուրախալի պահն էր, որ մեր ազգային-եկեղեցական կյանքին մեջ անկյունադարձ մը եղավ՝ իր շոշափելի հետքերը ձգելով մինչև այսօր մեր ժողովուրդի սիրտերեն ներս:

Բայց իրավունք ունիք, նոր թա'փ պետք է տալ այդ գեղեցիկ ճանապարհին, որ բացված է մեր եկեղեցվո և մեր ժողովուրդի առջև:

Ատոր ալ կրնանք վստահ ըլլալ, որ նույն ոգիով Կիլիկիո Աթոռը պիտի շարունակե գործել:

Մեր Հայրապետները արդեն Ձեզի այդ ուղղությամբ գրած են, և երբ Ձեր կողմեն պետք եղածը տնօրինվի, այդ ատեն վերստին այդ լույսի ճանապարհի մեջ պիտի քալենք, միասնաբար, ինչպես միշտ՝ ի փառս մեր ժողովուրդի:

Կրկին, Վեհափա'ռ Տեր, ընդունեցեք մեր շնորհակալությունները և մեր անկեղծ հավատիքը, որ ամեն ձևով պիտի փորձենք լիբանանահայության հաղորդել այս գեղեցիկ մթնոլորտը և ոգին, որոնք տիրեցին ս. Էջմիածին մեր այցելության բոլոր պահերուն:

Նոյեմբերի 12-ին, կիրակի օրը, Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի պատգամավորության անդամները՝ տ. Տաթև եպս. Սարգիսյանը, մեթր Խաչիկ Պապիկյանը և Վարդգես Տեր-Կարապետյանը, Մայր տաճարում ներկա են լինում սուրբ պատարագի արարողությանը և Լիբանանի իրադարձությունների հետևանքով զոհված հայերի հիշատակին նվիրված հանդիսավոր հոգեհանգստյան պաշտոնին:

«Տէր ողորմեա»-ից առաջ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը այս առթիվ խոսում է հետևյալ քարոզը,

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(12 նոյեմբեր 1978 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. ամէն»:

«Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի չարէն...»:

«Եվ մի ենթարկիր մեզ փորձությունների, այլ փրկիր մեզ բոլոր տեսակի չարիքներից»:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ,

Այս աղերսանքը, ինչպես գիտեք, մեր ամենօրյա Տերունական աղոթքի մի պարբերությունն է: «Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի չարէն...»:

Մի աղոթք, որ շատ հաճախ մենք արտասանում ենք, որպեսզի Աստուծո ողորմությունը և օգնությունը միշտ մեր վրա լինի, և մենք չենթարկվենք այլևայլ փորձությունների և փրկվենք աշխարհի ամեն տեսակի չարիքներից: Աշխարհի բոլոր մարդիկ, նույնիսկ ոչ-քրիստոնյաները չեն կարող չհուզվել այս սքանչելի մաղթանքի առաջ, որովհետև մարդկային աշխարհը լեցուն է փորձություններով և չարիքներով, որոնք այնքան դժբախտություն են բերում մարդկանց, ժողովուրդներին: Հատկապես, սակայն, մեր Մայր եկեղեցին և մեր հարազատ ժողովուրդը առանձնապես խոր ապրումով և հուզումով արտասանում են «Հայր մեր»-ը և մանավանդ այս տողերը. «Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի չարէն...»: Ինչո՞ւ է այդպես: Կարծում ենք, դուք բոլոր հայերդ լավ եք հասկանում այդ, որովհետև առավել կամ նվազ չափով ծանոթ եք մեր ողբերգական անցյալին, հայոց պատմության տխուր էջերին, մանավանդ վերջին հազար տարիների ընթացքում: Անիի հայկական թագավորության կործանումից հետո ամբողջ միջին դարը մինչև մեր դարի սկիզբները, մինչև Մեծ եղեռնը, հայ ժողովուրդը շատ հաճախ ապրել է ծանր փորձություններ և տեսել է բազում արհավիրքներ, հալածանքներ ու կոտորածներ: Մեզ այնպես է թվում, թե այս աղոթքը Հիսուս հատկապես հայ ժողովրդի համար է ստեղծել: Փառք Տիրոջը Ամենակալին, որ այդ հեռավոր, դժբախտ ժամանակաշրջանները հեռացան մեզանից, մեր ազգից, մեր հայրենիքից, և ահա մոտ վաթսուն տարիներից ի վեր, Սարդարապատի հաղթանակից հետո, հայկական պետականության ստեղծումից հետո, մեր ժողովուրդը կարողացավ հետզհետե համախմբվել իր պատմական Հայաստանի մի մասի վրա գոնե, այսօրվա Սովետական Հայաստանի հողի վրա, որտեղ արդեն նրա թիվը հասել է մոտ երեք միլիոնի, և հայ ժողովուրդը իր մայր երկրի մեջ ապրում է խաղաղ ու ապահով, վերաշինության և ազգային մշակույթի զարգացման պայմաններում Սովետական Միության հզոր պաշտպանության և օգնության ներքև: Մեծ եղեռնից հետո, մահվան ճիրաններից փրկված հայ զանգվածներ կարողացան ապաստան գտնել հյուրընկալ երկրների մեջ և այսպիսով ցրվեցին աշխարհով մեկ: Այսօր մենք ունենք մի հայկական սփյուռք, որի թիվը ավելի քան երկու միլիոն է: Մեր հարազատ եղբայրների և քույրերի մի մեծ մասը կարողացավ ապաստան գտնել Մերձավոր Արևելքի արաբական երկրներում՝ Լիբանանում, Սիրիայում, Հորդանանում, Իրաքում և այլ երկրներում: Եվ ահա ավելի քան կես դարից ի վեր նրանք ապրում են խաղաղ և բարօր կյանք թե՛ ընտանեկան և թե՛ համայնական առումով: Ինչ որ մեզ հատկապես մխիթարում է, այն իրողությունն է, որ նրանք կազմակերպված են իբրև հայկական եկեղեցական համայնքներ, պահպանելով իրենց

նախնյաց լույս հավատքը, իրենց մայրենի լեզուն, իրենց հայկական ոգեկանությունը և ազգային մշակույթը:

Մերձավոր Արևելքի ամենաբազմամարդ հայկական գաղութը դարձավ, ինչպես գիտեք, Լիբանանի հայկական համայնքը, ավելի քան երկու հարյուր հազար հայությամբ, որ կարելի է ասել, թե հանդիսանում է ամբողջ հայ ափյուռքի ողնաշարը: Այսպիսի երջանիկ իրադրության մեջ, հայերը Լիբանանում, եղբայրացած տեղացի արաբ ժողովրդի զավակների հետ, ապրում էին խաղաղ և բարգավաճ կյանք: Այնտեղ ծաղկում է մանավանդ հայ եկեղեցական կյանքը, որովհետև առաջին համաշխարհային պատերազմից հետո, Պեյրութում հաստատվեց մեր եկեղեցու պատմական կենտրոններից՝ Մեծի Տանն Կիլիկիո Աթոռը, որ եկեղեցական տեսակետից գլուխն է կանգնել այդ ամբողջ մեծ համայնքի: Այնտեղ գործում են բազմաթիվ հայկական վարժարաններ, մշակութային ակումբներ, երիտասարդական դաստիարակության կազմակերպություններ, այնտեղ հրատարակվում են բազմաթիվ օրաթերթեր, ամսագրեր, այնտեղ զարգանում է հայ գրականությունը ազգային-հայրենասիրական ոգով ներշնչված: Մի խոսքով Լիբանանի հայությունը ներկայացնում է պատկերը մի կենդանի, հայաշունչ, հայախոս, հայաբույր ու հայակամ հայության: Ինչ որ մեր բոլորիս սրտերը, հայաստանցիների բոլոր սրտերը ուրախացնում է, լցնում հրճվանքով և նույնիսկ մի քիչ էլ հպարտությամբ: Մենք ազգովին երախտապարտ ենք այդ բոլորի համար արաբ ազնիվ և հյուրընկալ ժողովրդին թե՛ Լիբանանի և թե՛ մյուս բոլոր արաբական երկրներին: Սակայն, ինչպես ծանոթ է ձեզ, մեզ համար անհասկանալի կերպով և անկախ հայերի կամքից և բաղձանքներից, այնտեղ՝ Լիբանանում մոտ չորս տարի առաջ ծայր տվեց ներքին քաղաքացիական կռիվ, որ շարունակվում է, ավա՜ղ, մինչև այսօր, և որին հետևանք զոհ են գնում նաև անմեղ զավակները մեր եկեղեցու և մեր հավատացյալ ժողովրդի: Մենք ուրիշ անգամ էլ առիթ ունեցել ենք խոսելու ձեզ այդ մասին, երկու տարիներ առաջ, երբ եղբայրական օգնության գործ ձեռնարկվեց այն ժամանակ և Մայր Աթոռի նախաձեռնությամբ կարևոր մի գումար հանգանակվեց ի նպաստ լիբանանահայ կարոտյալ մեր քույրերին և եղբայրներին: Սակայն վերջերս, հոկտեմբեր ամսի սկզբներին, խիստ բորբոքվեցին ներքին քաղաքացիական բախումները և այս անգամ առավելապես ծանրորեն տուժեցին հայաբնակ թաղամասերը: Պեյրութում կան հարյուրավոր մեոյալներ և վիրավորներ, բազմահազար հայ ընտանիքներ՝ առանց բնակարանի և ապրուստի միջոցների: Քանդված են նաև եկեղեցիներ, դպրոցական շենքեր և այլ հայկական հաստատություններ: Ավելի քան քսան հազար հայեր անտուն և անպաշտպան են մնացել և կարոտյալ վիճակի մեջ են:

Ահա այս տխուր կացության առաջ շատ բնական է, բոլոր հայերը, թե՛ Հայաստանից և թե՛ աշխարհի բոլոր ծագերից, խղճահարվեցին և եղբայրական զգացումներից մղված սկսեցին օգնություն կազմակերպել պատուհասված այդ հայկական գաղութին: Մենք ևս ձեռնարկեցինք օգնության աշխատանքի և այս նպատակով հրավիրեցինք Պեյրութից՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ներկայացուցիչներին, որպեսզի նրանց հետ խորհրդակցաբար կարողանանք լայն ծրագիր կազմել և համազգային տարողությամբ կազմակերպել Լիբանանի հայ կարոտյալների օգնության գործը և հայկական կյանքի վերականգնման աշխատանքները, որովհետև մենք բոլորս կամենում ենք, որ այդ հայկական մեծ գաղութը վերստին գտնի իր խաղաղ, անդորր, բարգավաճ կյանքը, պահպանի իր ինքնությունը և ամ-

բողջականությունը, իբրև սյուն սփյուռքահայ կյանքի: Ամեն հարված, որ հասցվում է այնտեղ մեր Հայաստանյայց եկեղեցուն, հարված է՝ ուղղված ամբողջ մեր եկեղեցուն, ամեն հարված՝ հասցված լիբանանահայության, հարված է՝ ուղղյալ համայն հայ ազգին, որ ի Հայաստան և որ ի սփյուռս աշխարհի: Ահա այս գիտակցությամբ է, որ մենք կամենում ենք ձեռք-ձեռքի տալ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության հետ, և մեկտեղենք մեր բոլոր ուժերը՝ կազմակերպելու համար լիբանանահայության օգնության և վերականգնման սրբազան գործը:

Սիրելի ժողովուրդ, ահա չորս օրեր առաջ Մայր Աթոռ ժամանեցին Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ներկայացուցիչները՝ գլխավորությամբ գերաշնորհ տ. Տաթև եպիսկոպոս Սարգիսյանի: Այստեղ են գտնվում այս առիթով նաև լիբանանահայ հասարակական այլ գործիչներ, երկու կարևոր թերթերի խմբագիրներ, որոնք ժամանել են Հայաստան նույն դեպքերի առթիվ: Կիլիկյան Կաթողիկոսության պատվիրակների հետ մեր խորհրդակցությունները վերջացան արդեն, և կազմվեց ընդհանուր գծերով մի ծրագիր, որպեսզի արտասահմանում կազմակերպվի Լիբանանի հայ աղետյալների օգնության գործը համազգային նյութական լայն միջոցներով:

Մենք հույս ունենք և հավատում ենք, որ մանավանդ այս անգամ մեր եկեղեցու բոլոր զավակները անխտիր, ուր էլ որ գտնվեն աշխարհում, ձեռք-ձեռքի տված մեկ մարդու նման իրենց առավելագույնը պիտի նվիրաբերեն, առատաբունն կերպով, որպեսզի սպասված նպատակը իրագործվի, լավագույն արդյունքներով:

Մենք պետք է ձեզ հայտնենք, թե մտահոգված է նաև մեր հայրենի կառավարությունը: Մի շաբաթ առաջ հանդիպում ունեցանք մեր հանրապետության Մինիստրների խորհրդի մեծարգո նախագահի հետ, ներկայացնելու համար լիբանանահայոց այսօրվա դժբախտ կացությունը: Հաստատեցինք, թե Մեր հաղորդումները ինչքան խոր մտահոգություն և վիշտ պատճառեցին մեր կառավարության ղեկավարին: Արդ, կարող ենք հայտնել ձեզ, որ իբրև հետևանք Մեր խնդրանքին և դիմումին, Հայաստանի կառավարությունը որոշել է պետական միջոցներով եղբայրական օգնություն հասցնել Լիբանանի հայության: Իսկ Մայր Աթոռիս գործը պետք է լինի Մեր հովանավորությամբ համազգային հանգանակություն կազմակերպել ամբողջ սփյուռքի տարածքի վրա, որտեղ կան հայկական եկեղեցական համայնքներ ու ազգային կենտրոններ:

Եվ որպես հայրական հոգածության արտահայտություն և սկզբնավորում համագաղութային հանգանակության արշավի, Մայր Աթոռիս սեփական միջոցներից Մենք տրամադրում ենք հիսուն հազար դոլլար Պեյրութի Կենտրոնական մարմնին, իբրև ս. Էջմիածնի նպաստը լիբանանահայ աղետյալներին:

Աղոթում ենք առ Աստված, որ մեր այս բարեսիրական, աստվածահաճո գործը հաջողությամբ պսակվի, և մենք կարողանանք մոտ ապագային ողջունել՝ վերաշինված, վերականգնված լիբանանահայ գաղութը, բուժված իր վերքերից, ինքնավստահ ու կենսալի, որ կոչված է շարունակելու իր հոգևոր և ազգային առաքելությունը Լիբանանի օրհնյալ երկրի մեջ:

Աղոթում ենք նաև, որ Աստված Իր ողորմությունը և շնորհները առատապես բաշխի Լիբանանյան հայրենիքի ողջ բնակչության, մահմեդական և քրիստոնյա բոլոր համայնքներին, որպեսզի նրանք եղբայրական զգացումներով համերաշխորեն մոռանան իրենց անհասկացողությունները և

միասնաբար սկսեն վերաշինել իրենց վիրավոր երկիրը, մոտ ապագային ողջունելու համար լուսաբացը խաղաղության և ապագա առավել երջանկության:

Արդ, սիրելի ժողովուրդ, բնական է, որ Մեր խոսքը վերջացնենք նույն աղոթքով՝ «Տէր Աստուած, մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի չարէն...». այժմ և հավիտյան. ամեն:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Այնուհետև Նորին Սուրբ Օծությունը նախագահում է հոգեհանգստյան հանդիսավոր արարողությանը, որին ներկա են լինում նաև ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող լիբանանահայ հասարակական ծանոթ անձնավորություններ՝ «Զարթոնք» օրաթերթի խմբագիր Գերսամ Անարոնյանը, «Արարատ» օրաթերթի խմբագիր Ժիրայր Նաիրին և հավատացյալների հոծ բազմությունը:

Ժամը 15-ին Վեհարանի սեղանատանը, ի պատիվ Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի պատվիրակության, տրվում է հրաժեշտի ճաշկերույթ, որին ներկա են լինում տ. Սիոն, տ. Կոմիտաս, տ. Հուսիկ, տ. Գևորգ սրբազանները, Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ պրոֆ. Սարգիս Մելիքսեթյանը, Հովհաննես Թոփուզյանը, Կարպիս Կարագյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուն Հատիտյանը, Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար Պարգև Շահբազյանը և Մայր Աթոռի ֆինանսական բաժնի վարիչ Գառնիկ Քեհյայանը:

Ընդունելությանը ներկա էր նաև ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը:

Հրավիրյալների թվում էին «Զարթոնք» օրաթերթի խմբագիր Գերսամ Անարոնյանը, «Արարատ» օրաթերթի խմբագիր Ժիրայր Նաիրին և ուրիշներ:

Ընդունելության ժամանակ Հայոց Հայրապետը, մեկ անգամ ևս ոգեկոչելով հիշատակը լիբանանահայ զոհվածների, աղոթեց նրանց հոգիների հանգստյան և եղբայրական Լիբանանի ներքին խաղաղության վերահաստատման ու Լիբանանի ժողովուրդների համերաշխ համագործակցության համար:

Այս առթիվ Հայոց Հայրապետը Լիբանանի հայ աղետյալների օգնության համար Մայր Աթոռի միջոցներից կատարված 30 հազար ամերիկյան դոլլարի գումարը բարձրացրեց 50 հազարի:

Նույն ոգով հուզիչ ելույթներ ունեցան տ. Սիոն, տ. Տաթև սրբազանները, մեթր Խաչիկ Պապիկյանը, Վարդգես Տեր-Կարապետյանը և Ժիրայր Նաիրին:

ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը, ելույթ ունենալով, շեշտեց ողջ հայության եղբայրական համագործակցության ու եկեղեցական միասնության անհրաժեշտությունը այս ծանր օրերին՝ ի խնդիր լիբանանահայության մշակութային, տնտեսական կյանքի շուտափույթ վերականգնմանը:

Նոյեմբերի 15-ին, չորեքշաբթի օրը, Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի պատվիրակությունը հրաժեշտ տվեց Հայոց Հայրապետին և Մայր Աթոռին, լավատես ու մխիթարված վերադարձավ Անթիլիաս՝ իր հետ տանելով Նորին Սուրբ Օծության եղբայրական ողջույնները Տ. Տ. Խորեն Ա. կաթողիկոսին, Տ. Տ. Գարեգին Բ աթոռակից կաթողիկոսին և հայրական օրհնություններն ու բարեմաղթությունները Լիբանանի ափերի վրա ապրող բոլոր ժողովուրդների կյանքում ցանկալի խաղաղության և բնականոն աշխատանքի վերահաստատմանը: